123. **Արամ Ա. Աշճեան.** — Ծնած է Կէտիկ Բաշա 1855 ին : Իր քոյրն է համբաւաւոր ձեւագէտ-կարուհի **Սուրբիկ Մաստաքէյ** որ շատ մը աշակերտուհիներ հասցուցած է և որ ատենօք գաղափարը յղացած է «Ազգանուէր Հայուհեաց Ընկ.եան» : — Արամ 1878 ին տպարան մը բացած է Սիւմպիւլլի խանի գետնայարկը, թիւ 35, նաեւ Եուսուֆեան խանի միջնայարկը, թիւ 15, ատեն մըն ալ ընկերանալով [Ա. ԱՇՃԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ] Ե. Տնտեսեանի, երբ վերջինս պաշտօն ունէր Գեղարուեստից վարժարանը : — Հրաշագործ Մկրտիչ Կաթողիկոսի **Գեղմ եւ դարմանմ երեսնից ցաւոց Հայկայ եւ Արամայ ազգին սերնդոց** գիրքը տպագրելուն հետեւանօք կը դատապարտուի բանտի, նաեւ տպարանի փակման : Դեպքին կ'ըստիպուի մեկնիլ վառնա, յետոյ Ռումանիա՝ ուր գերծ չը մնար դարձեալ Համիտեան հետապնդումներէն : Սահմանադրութեան հռչակումին՝ Պոլիս կու գայ և կը մեռնի Գատրքեոյ 1909 ին : — Իր տպարանէն լոյս ընծայուած են. — Ազգ. Վերակազմութիւն, Նոր կեանք (Եդիա), Մի կաթիլ արտօսր (1879), Բերկրանք ու վիշտ, Առածք Կարոյոսի (1881), Լապտեր Դիոգինեան (1883 ին սկսուած իր թերթը՝ կրթական նախարարութեան հրամանաւ դադրած և 1888 ին կրկին երեւցած քանի մը համար), Թեոդորոս Սայհունի (1884), Ցուշատետր, Պարոն Շուպլան (1885), Բառագիտութիւն (1886), Տարեցոյց Խիկարի (1888), նաեւ Ս. Գարամանեանի «Ընտանիք» հանդէսն ու «Դաստիարակութիւն մարց»ը, Դրպրոցասէր Տիկնանց Ընկ.եան 1879-82 ի և «Ազգանուէր Հայուհեաց» 1881-83 ի տեղեկագիրները :

ԱՐԱՄ ԱՇՃԵԱՆ

124. **Յարութիւն Պարոնեան.** — Եղբայրը՝ Սուքիաս վրդ. Պարոնեան Մարսիլիայէն մամուլ մը կը դրկէ իրեն, նաեւ մեծաքանակ թուղթ, զորս Յարութիւն կը մթերէ Բիւրքճի խան և 1877 ին Սուլթան Համամ կը բանայ տպարան մը որ քանի մը տարուան կեանք կ'ունենայ : Հոն տպուած են **Խոսք Փափագեան Սեւիսանցի** (1877), **Օրացոյց** (1877-8) : — Յարութիւն Պարոնեան 1873 ին պահ մը ընկերացած է Յովսէփ Գաւաֆեանի [ՅՈՎՍԷՓ ԳԱՎԱՖԵԱՆ ԵՒ ԸՆԿ.] և հրատարակած 1874 ի օրացոյցը :



Տպագրիչ Յ. ՊԱՐՈՆԵԱՆի եղբայր
† ՍՈՒՔԻԱՍ ՎՐԴ.

125. **Ա(տրապետ) Պ. Պիպէրեան.** — Ծնած է Գաղատիա 1842 ին, հայ հռոմէական. Պզտիկուց եկած է Պոլիս և գրաշարութեամբ պարապած : 1873 ին՝ ինք, Կ. Պարոնեան և Ս. Պարտիզպանեան միանալով տպարան մը կը բանան, սակայն ընկերութիւնը կը լուծուի քանի մը տարիէն. այնուհետեւ Պիպէրեան կը հաստատուի Սիւմպիւլլի խան, թիւ 18-19, զբաղելով հրապարակի գործերով, սիկարի թուղթով, [**Բերա** անուամբ քարտիսաւոր սիկարի թուղթն իր հնարածն է,] և խել մը հայատառ-տաճկեվար բարգմանածոյ վէպերու հրատարակութեամբ : 1878 ին տպած է «Քրիստ. վարդապետութիւն Հայաստն.», 1894 ին՝ Ծածուկ